ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Առողջության կազմակերպում և կառավարում մագիստրոսական ծրագիր

Ընդունելության հարցազրույցի օրինակելի հարցաշար

1. Մասնագիտական մոտիվացիա և նպատակներ

Նպատակ՝ բացահայտել դիմորդի մոտիվացիան, կարիերային ուղղվածությունը և հանրային առողջապահության ոլորտի ընկալումը:

1. Ի՞նչու եք որոշել դիմել հանրային առողջապահության մագիստրոսական ծրագրին:
2. Ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր մասնագիտական դերը հանրային առողջապահական համակարգում:
3. Ինչպե՞ս է այս մագիստրոսական ծրագիրը համընկնում Ձեր երկարաժամկետ կարիերային նպատակների հետ:
4. Ի՞նչ ներդրում կցանկանայիք ունենալ Հայաստանի կամ տարածաշրջանի առողջապահության զարգացման գործում:
5. Ի՞նչն եք համարում Ձեր ուժեղ կողմը, որը կօգնի այս ոլորտում հաջողել:

2. Հանրային առողջապահական համակարգերի վերաբերյալ պատկերացումներ և քննադատական մտածողություն

Նպատակ՝ գնահատել համակարգային մտածողությունը, հանրային առողջապահական սկզբունքների գիտակցումը և վերլուծական կարողությունը:

1. Ինչպե՞ս կբնորոշեք հանրային առողջապահության հիմնական նպատակները:
2. Ի՞նչ տարբերություն կա առողջապահական ծառայությունների կազմակերպման և հանրային առողջության միջոցառումների միջև:
3. Կարո՞ղ եք օրինակ բերել առողջապահական խնդրի, որը պահանջում է համակարգային մոտեցում:
4. Ի՞նչ գործոններ են ազդում հանրային առողջապահական ծրագրերի/քաղաքականության հաջողության կամ անհաջողության վրա:
5. Ինչպե՞ս կգնահատեիք Հայաստանի հանրային առողջապահական համակարգի ուժեղ և թույլ կողմերը:

3. Կառավարման, պլանավորման և առաջնորդության կարողություններ

Նպատակ՝ գնահատել ռազմավարական մտածողությունը, թիմային աշխատանքը և նախաձեռնողականությունը:

1. Նկարագրեք մի իրավիճակ, երբ ղեկավարել եք թիմ կամ նախաձեռնություն: Ինչպե՞ս էր կազմակերպված Ձեր աշխատանքը:
2. Ինչպե՞ս եք որոշում առաջնահերթությունները, երբ առկա են սահմանափակ ռեսուրսներ:
3. Ինչպե՞ս եք լուծում թիմում առաջացած անհամաձայնությունները:
4. Ինչպիսի՞ կառավարման կամ պլանավորման մոտեցումներ եք համարում արդյունավետ առողջապահական ոլորտում:
5. Ի՞նչն եք համարում լավ առաջնորդի ամենակարևոր հատկանիշը:

4. Հետազոտական և ապացույցահեն մոտեցում

Նպատակ՝ բացահայտել դիմորդի հետազոտական հետաքրքրությունը և տվյալների հետ աշխատելու մոտեցումը:

1. Ունե՞ք հետազոտական աշխատանքների իրականացման որևէ փորձ կամ հետաքրքրություն:
2. Ի՞նչ է նշանակում ապացույցահեն որոշում հանրային առողջապահության մեջ:
3. Եթե դուք ստանաք հակասական տվյալներ մի հարցի վերաբերյալ, ինչպե՞ս կվարվեք:
4. Որո՞նք են այն թեմաները, որոնք կցանկանայիք հետազոտել ապագայում:
5. Ինչպե՞ս եք գտնում և գնահատում հուսալի գիտական աղբյուրները:

5. Հաղորդակցման, էթիկական և արժեքային կողմնորոշում

Նպատակ՝ գնահատել դիմորդի հաղորդակցական կարողությունները, մշակութային և էթիկական հարցերին մոտեցումը:

1. Ինչպե՞ս եք արձագանքում թիմում կամ լսարանում հակառակ կարծիքներին:
2. Ի՞նչն է Ձեր կարծիքով էթիկական վարքի կարևորությունը հանրային առողջապահության մեջ:
3. Կարո՞ղ եք բերել օրինակ, երբ բարդ իրավիճակում կարողացել եք պահպանել էթիկական սկզբունքները:
4. Ինչպե՞ս եք աշխատում տարբեր մշակութային և սոցիալական միջավայրերից եկած մարդկանց հետ:
5. Ինչպե՞ս կբնորոշեիք հանրային առողջապահության հիմնական արժեքները:

Լրացուցիչ ամփոփիչ հարցեր (ըստ հանձնաժողովի ցանկության)

- Ինչպիսի՞ ակնկալիքներ ունեք ծրագրից:
- Ինչպիսի՞ նոր հմտություններ կամ գիտելիքներ կցանկանայիք ձեռք բերել մագիստրատուրայում:
- Ինչո՞վ Դուք կկարողանաք նպաստել ծրագրի և ուսանողական համայնքի զարգացմանը: